

## ԱՆՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՒՅՆԱՅՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ն. Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ

Ի՞նչ է ազգային նույնացումը և ի՞նչ գործոններով է պայմանավորված այն:

Անձի ազգային նույնացման դեպքում անձը գիտակցում է իր պատկանելիությունը որոշակի էթնիկական հանրությանը: Այն չի նույնացվում էթնիկականություն հասկացությանը, քանզի վերջինիս առկայության պայմաններում էթնիկական պատկանելիությունը որոշվում է օբյեկտիվ հատկանիշներով՝ լեզվով, մշակույթով, ընդհանուր կենսաբանական ծագմամբ և այլն: Ազգային նույնացումը որևէ ազգային հանրության հետ անձի կողմից իրեն նույնացնելու և մյուսներից առանձնացնելու ապրում է: Այն իրականանում է հոգեբանական, սոցիալական, մշակութային գործոնների ազդեցությամբ:

Հոգեբանական գործոնների կառուցվածքում տարբերակվում են իմացական և գերզգայական բաղադրիչներ: Ընդ որում, իմացականը իր մեջ ներառում է գիտելիքներ և պատկերացումներ ընդհանուր կենսաբանական ծագման, համոզվածություն ընդհանուր նախնիներից սերված լինելու, գիտելիքներ ընդհանուր պատմական ճակատագրի, մշակութային ավանդույթների վերաբերյալ և այլն: Իսկ գերզգայական բաղադրիչը իր մեջ ներառում է անձի կողմից իր իսկ ազգային խմբի առանձնահատկությունների գնահատում, վերաբերմունք, որոնցից էլ բխում են համապատասխան վարքաձևեր և էթնոտարբերակիչ հատկությունների կիրառում:

Միևնույն իմաստն արտահայտելու համար տարբեր ժողովուրդներ գործածում են միանգամայն տարբեր խոսքի ձևեր, շարժալեզվական տարբեր միջոցներ ու կեցվածքներ: Օրինակ՝ «Նոր Զելանդիայում մատրիները բարևում են քթները միմյանց քսելով: Այնու ազգության մեջ ընդունված է բռնել միմյանց ականջներից և ողջունի բարձր ճիչ արձակել: Սամաուները հոտոտում են միմյանց դեմքերը, իսկ ձեռքսեղմումի դեպքում՝ նաև ձեռքերը: Երիտասարդ ամերիկացիները խփում են միմյանց մեջքին: Հրդեհաստանում ու մերձակա մի քանի երկրներում կիսախուփ ձեռքերը սեղմում են կրծքին՝ թեթևակիորեն խոնարհելով գլուխը: Տիբեթում աչք ձեռքով բարձրացնում են գլխարկը, ձախը դնում ակաճի հետևն ու լեզուն հանում: Հսկիմսները օտարերկրացուն ողջունում են նրա ուսին կամ գլխին թեթևակի հարվածելով»<sup>1</sup>:

Ժխտման հասկացությունը ևս տարբեր ազգերի մեջ տարբեր ձևով է արտահայտվում: Օրինակ՝ «Օվինբուրնդու ազգության մարդիկ դեմքի մոտ թափահարում են ձեռքը՝ ցուցամատն առաջ մեկնելով: Տորեսի նեղուցի բնիկները բարձրացնում են աչք ձեռքը, թափ տալիս ու երկու-երեք կիսաշրջան կատարում: Բենգալացիները չորս անգամ գլուխը ուսից ուս են թեքում: Հսկիմսները «ոչ» արտահայտելու համար աչքով են անում: Իսկ ահա զարմանք արտահայտելիս հաբեշները աչք ձեռքն ափի հակառակ կողմով դնում են ճակատին: Մակլայի ափի պապուասները բոունցքը դնում են քթին կամ դուրս հանում լեզուն. ընդ որում, որքան մեծ է զարմանքը, այնքան երկար է լեզվի դուրս հանված մասը»<sup>2</sup>:

Յուրաքանչյուր ժողովրդի շարժույթները սեփական մշակույթի ներսում օրինաչափ են ու հարազատ: Դրանք արդյունք են բազմադարյան պատմության ընթացքում հաստատված կենցաղի, ավանդույթների, աշխարհըմբռնման, կրոնի և այլ գործոնների:

<sup>1</sup> Տե՛ս Ե. Գևորգյան, Օարժումների լեզուն, Եր., 1986, էջ 51-52:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 67:

Ահա թե ինչ է գրում այս առնչությամբ Ս. Վ. Նևերովը հարգանքի՝ ճապոնացիների ըմբռնման մասին. «Հատակին նստելու սովորույթը ճապոնացիների մեջ հակում է առաջ բերել դեպի մարմնի խոնարհ դիրքը: Ծապոնացու համար տարօրինակ է բարևելիս աթոռից վեր կենալը, ինչպես այդ ընդունված է Եվրոպայում. նստած վիճակում նա ցածր է մարդուց, և հատկապես կեցվածքն ավելի հարգալից է»<sup>1</sup>:

Ի դեպ, նույն պատկերացումներն ունեն նաև հնդիկները, որոնք տարեց մարդու ներս մտնելու դեպքում շտապում են նստել: Վ. Գ. Սադուրը Ինդոնեզիայի փողոցներում հանդիպող մի շարժանքի առնչությամբ գրում է հետևյալը. «Ինդոնեզացին իր պետի մոտով անցնելիս խոր գլուխ է տալիս ու ժպտում: Ըստ որում, թեև երկարում դեպի ցած, կարծես ցույց տալու համար, թե որ կողմից է մտադիր անցնել՝ մեջքով դեպի պետը չլիճելու նպատակով: Եվ փաստորեն այս շարժանքը տեղափոխվել է փողոցային երթևեկության [կանոնների] մեջ ու ցույց է տալիս, թե հետիոտնը կամ վարորդը ա՞ջ, թե՞ ձախ կողմով է ուզում անցնել-գնալ»<sup>2</sup>:

Ծարժույթների բնույթը որոշվում է նաև երևույթի կամ իրականության կապի զանազան ըմբռնումներով: Օրինակ՝ անգլիացու համար շատախոսությունը զուգորդվում է բերանի հետ, ուստի «շատախոսություն» արտահայտելու համար ձեռքերը դաստակների մատում միացնում է իրար ու շնամկան բացվող ու փակվող բերան հիշեցնող շարժումներ կատարում. ռուսի համար՝ շարժիչի աշխատանքի հետ՝ ցուցամատով շրջանաձև շարժումներ գոտկատեղի մոտ. ֆրանսիացու և իտալացու համար՝ ժամանակի տևողության հետ. մատներով շոյում է այտը, խոսակցությունն այնքան երկարեց, որ մոռուք աճեց: Ահա այս կերպ առաջ է գալիս շարժույթների այն ընդհանրությունն ու բազմազանությունը, որ գոյություն ունի ամբողջ աշխարհում:

Ազգային նույնացման մշակութային գործոնը իր մեջ ներառում է նախ և առաջ ազգային լեզուն, ավանդության և սովորության համակարգը, վարքաձևերը, նիստուկացը և այլն:

Ազգային կարևորագույն հատկություններից և էթնիկական նույնացման գործոններից մեկն է ազգային լեզուն՝ իր եռակողմ գործառնությունը՝ ա) իբրև ազգային գաղափարախոսության ստեղծման, տարածման ու ավանդման միջոց, բ) իբրև գաղափարախոսական պայքարի առարկա և գ) լեզուն, լինելով իրականության սոցիալական կառուցավորման արդյունք, հանդես է գալիս իբրև իրականության ստեղծման և վերստեղծման կարևոր գործոն: Իբրև ազգային ընդհանրության հիմնական բաղադրատարր՝ լեզուն էթնիկական պատկանելիության, կրոնի, ժողովրդի պատմական ու սոցիալական հիշողության և տարածքային ընդհանրության հետ հատուկ պայմաններ է ստեղծում ազգային ինքնագիտակցության նշանակալիության համար: Յուրաքանչյուր ազգային լեզվում ներառված է տվյալ ազգի մշակույթի մտածական գծապատկերը, և յուրաքանչյուր մշակույթի լեզվական հենքի իմացությունը թույլ է տալիս վերծանել մշակութային երևույթները: Մշակույթի և լեզվի փոխկապակցությունը և վերջինիս պայմանավորվածությունն անձի գեամատման ու զարգացման գործընթացում դեռևս իր ժամանակին ուշադրության են արժանացել Բ. Ուորֆի աշխատություններում: Նա բերում է մի շարք օրինակներ. «Հոպիները, - գրում է նա, - մի բառով են անվանում բոլոր թռչող առարկաները, բացի թռչուններից, իսկ մեր լեզվում և ընդհանրապես շատ այլ լեզուներում բոլոր թռչող առարկաների համար կան համարժեքներ»<sup>3</sup>: Կամ, օրինակ. «Էսկիմոսները իրենց լեզվում ունեն ձյուն նշանակող մի շարք բառեր՝ թափվող ձյուն, հալվող ձյուն, չոր ձյուն, և այլն, երբ կարելի է բավարարվել միայն մեկ բառով: Մի՞թե ամերիկացիները, օրինակ, ունակ չեն տեսնելու ձյան բոլոր այն տեսակները, որոնք տարբերում են էսկիմոսները, և եթե մարդիկ տարբեր ազդակների արձագանքում են տարբեր՝ ոչ լեզվական հակազդումներով, ապա արդյո՞ք կարելի է եզրակացնել, որ նրանք տարբերում են այդ ազդակները՝ չունենալով համապատասխան բառեր դրանք արտահայտելու համար: Բնականաբար, ամերիկացիները, մեքսիկացիները և հարավային այլ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 52-53:

<sup>2</sup> Գ. С. Садур. Этническая социальная психология. Москва, 1999, с. 33-37.

<sup>3</sup> М. Коул, С. Скрибнер. Культура и мышление. Москва, 1977, с. 67-69.

ծողովուրդներ ընդունակ են տարբերակելու ձյան տեսակները, եղանակի փոփոխությունները, սակայն, անկասկած, ճիշտ է, որ էսկիմոսների և մեքսիկացիների պատկերացումները ձյան և եղանակների տեսակների մասին տարբերվում են, այդ տարբերությունների հիմնական ձևավորողը լեզվամտածողության գործոնն է. իրոք, էսկիմոսները պետք է մշտապես դատեն ձյան մասին, իսկ ամերիկացիները մասն անհրաժեշտության հանդիպում են հազվադեպ և առանձնահատուկ դեպքերում<sup>6</sup>:

Էթնիկական Գույնությունը Էթնիկական հանրության պատկանելիության գիտակցման հետ մեկտեղ դրսևորվում է նաև վերջինիս անդամակցությանը տրվող էթնոկրի գնահատականով: Արժանապատվությունը, հպարտությունը, անարգանքները, վախերը միջէթնիկ հասեմատության կարևոր չափանիշներ են: Այդ զգացումները հենվում են էթնիկ հանրության խորը հուզական կապերի և բարոյական պարտականությունների վրա, որոնք ամրակալվում են անհատի սոցիալականացման գործընթացում ձևավորելով անձի էթնիկական դիրքորոշումները: Մենք առաջարկում ենք էթնիկական դիրքորոշումների հետևյալ տարբերակումները՝ **էթնոմետ դիրքորոշում**<sup>7</sup> իբրև անձի ներքին կողմնորոշման վիճակ, որը միտված է դեպի էթնիկականը, ազգայինը, զուտ ավանդակաճը՝ հենվելով ազգային լեզվի և մշակույթի, ավանդույթների ու սովորույթների, բնավորության ու կրոնի մասին անձի ունեցած պատկերացումների վրա, և **էթնոմերթ դիրքորոշում**<sup>8</sup> իբրև անձի ներքին կողմնորոշման հատուկ վիճակ, որը միտված է ազգային, էթնիկականի և զուտ ավանդականի մերժմանը: Վերջիններս, անշուշտ, իրենց խոր ազդեցությունն են թողնում անձի էթնիկական սոցիալականացման և էթնիկական Գույնացման գործընթացի խթանման կամ խաթարման վրա: Մի շարք հեղինակներ էթնիկական Գույնացման ձևավորման վրա ազդող գործոններից կարևորում են նաև անհատի ազգային որակների անփոփոխությունն ու հաստատունությունը (константность):

Այն էթնոկիրները, ովքեր չեն ընդունում իրենց էթնոսի լեզուն, մշակույթը, սովորույթներն ու ավանդույթները, հոգեբանորեն օտարվում են իրենց էթնոսից: Պատկանելիության և օտարման զգացումները էթնոսի կազմում անձի սոցիալ-հոգեբանական հակադիր վիճակների արտահայտություններն են:

Էթնոկրի մոնոէթնիկ Գույնակաճությունը կապված է պաշտոնական էթնոպատկանելիության հետ: Մոնոէթնիկ Գույնակաճացումը հաճախ դրսևորվում է ծայրահեղ ձևերով՝ արտահայտվելով իբրև հիպերԳույնացում, և հազեցված է էթնիկ մյուս խմբերի նկատմամբ նախապաշարումներով և վերաբերմունքներով: Օրինակ, մոնոէթնիկ հայերը ցուցաբերում են ցածր հանդուրժողականություն կապված իրենց և ռուսների սերտ շփումների հետ:

Ազգային Գույնացման սոցիալական բաղադրիչը իր մեջ ներառում է սոցիալական այն միջավայրը, որտեղ տեղի է ունենում անձի սոցիալականացման գործընթացը, վերջինս կարող է լինել ազգային Գույնացման համար նպաստավոր կամ աննպաստ:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով՝ որոշ մարդիկ բնորոշվում են տարէթնիկ Գույնությամբ հատկապես այն դեպքում, երբ բազմազգ հասարակության մեջ օտար ազգային խումբը ունենում է ավելի բարձր տնտեսական, սոցիալական և այլ կարգավիճակներ, քան ազգայինը: Այս միտումը շոշափում է սոցիալական խիստ այծմետական խնդիրներ, որոնք կարևորում են՝ կապված արագ զարգացող տեղափոխությունների, ազգամիջյան փոխհարաբերությունների և արտագաղթի հետ:

Նույնացումը տարէթնիկ խմբի հետ կարող է առաջ բերել էթնիկական անդեմություն, խզում անձի և էթնոսի միջև<sup>9</sup>:

Մոնոէթնիկ Գույնացումից տարբերակվում է նաև երկէթնիկ Գույնացումը, որի առկայության պայմաններում տեղի է ունենում միաժամանակ երկու էթնիկական խմբերի արժեքների Գույնացում. երբ անհատը, գիտակցելով և կիրառելով իր էթնիկական արժեքները, միաժամանակ յուրացնում և վերարտադրում է նաև տարէթնիկ արժեքները:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 88-89:

<sup>7</sup> Տե՛ս В. В. Плименов, Системный подход к этности, Москва, 1996, էջ 72-77:

<sup>8</sup> Տե՛ս Y. W. Burton, Resolving Deep-Rooted Conflict. University Press of Armenia, 1992,

իրեն երկու մշակույթների միաձուլման արդյունքում գիտակցող անձի նույնացումը էրիկսոնը անվանում է միաձուլված նույնացում<sup>7</sup>։ Նա տարբեր իրավիճակներում հերթափոխում է իր վարքաձևերը՝ վերարտադրելով ազգային նույնացման արդյունքները։

Աճձի էթնիկական և տարէթնիկական նույնացումների արդյունքները՝ իբրև դիտարկումների իրագործում, կարող են կրել թե՛ կոնֆլիկտային և թե՛ ոչ կոնֆլիկտային բնույթ։

Եթե ստեղծվում է մի իրավիճակ, երբ էթնոկիրը պետք է ընտրություն կատարի էթնիկական և տարաէթնիկական դերերի միջև և առաջնությունը տա դրանցից որևէ մեկին, ապա այն իրականացվում է տվյալ ժամանակահատվածում անձի սոցիալ-հոգեբանական հարմարմանը նպաստող իրադրության օգտին։

Գոյություն ունեն հակադիր կարծիքներ միջէթնիկ ամուսնություններից ծնվածների էթնիկական նույնացման առանձնահատկությունների վերաբերյալ։ Որոշ հեղինակներ կարծում են, որ եթե միջէթնիկ ամուսնություններից ծնվածները գիտակցում և ընդունում են, որ իրենք պատկանում են միաժամանակ երկու էթնիկ հանրությունների, ապա դա նպաստում է նրանց անձնական աճին, օրինակ՝ XX դ. նշանավոր գրող ու հրապարակախոս Ն. Ն. Բերբերովան, որի հայրը հայ է, մայրը՝ ռուս, գրում է. «Ես արդեն ինձ չեմ զգում կեսից բաղկացած, ես ֆիզիկապես զգում եմ, որ իմ վրայով անցնում է ոչ թե կտրվածք, այլ կար, որ ես ինքս եմ կար, որ այդ կարով ինչ-որ բան համընկել է, պինդ միացել, որ ես ինքս միաձուլման, միացման, ներդաշնակության օրինակներից մեկն եմ բնության մեջ, որ ես իզուր չեմ ապրում, այլ իմաստ կա նրանում, որ ես այնպես եմ, ինչպիսին որ կամ, այն է՝ սինթեզի երևույթներից մեկը հակադրությունների աշխարհում»<sup>8</sup>։ Նաև «Մշակույթային հիբրիդները»<sup>9</sup> փոքրամասնությունների խմբերի անդամները և միջէթնիկ ամուսնություններից ծնվածները հաճախ զգում են, որ իրենք հենց կտրվածք են և ոչ կար։ Մարգիմալ էթնիկ նույնացում ունեցող այդ անհատները հավասարակշռություն են պահպանում երկու մշակույթների միջև՝ պատշաճ չափով չտիրապետելով նրանցից ոչ մեկի նորմերին ու արժեքներին։ Նման մարգիմալները հաճախ ունենում են ներանձնային կոնֆլիկտներ, որոնց նախանշաններն են՝ անկազմակերպվածությունը, «անանցանելի պատի» զգացումը, անհարմարվողականությունը, անհաջողության զգացումը, հուսահատությունը, գոյության անիմաստությունը, ագրեսիվությունը։ Այս դեպքում նրանք ընտրում են «հարմարվողականության, սեփական բարեկեցության պահպանման ռազմավարություն, որը թույլ է տալիս փոքրամասնության խմբի անդամներին պահպանել դրական նույնություն՝ բացառելով անհանգստություն պատճառող էթնիկական նույնությունը»<sup>10</sup>։ Նախ՝ անձնական նույնությունը գերադասվում է էթնիկ նույնացումից և սոցիալականից ընդհանրապես։ Անհատն իրեն գիտակցում է նախ և առաջ որպես եզակի անձնավորություն, այլ ոչ թե որևէ խմբի անդամ։ Երկրորդ՝ հնարավոր է սոցիալական նույնացման վերականգնվողում առանց էթնիկ նույնացման։ Վերոհիշյալ ռազմավարության առկայությունը հաստատվում է կատարված ուսումնասիրությունների միջոցով, որոնք իրականացել են դազախական ազգության շրջանում։ Երբ փորձում էին գտնել էթնիկ նույնացման տեղը, Կուն Մակպարտլանդի «Ո՞վ եմ ես» թեստը լրացնելու ժամանակ պարզ դարձավ, որ էթնիկ պատկանելիությունն ավելի հաճախ նշում էին դազախերեն իմացողները (71,6%), քան լեզվին չտիրապետողները (12,5%)։ Այլ կերպ ասած՝ վերջիններս, որոշակի «խոցվածություն» զգալով, ձգտում էին պահպանել իրենց ինքնարժեքը՝ ինքնադասակարգման դիրքերից հանելով էթնիկ պատկանելիությունը և փոխարինելով այն սոցիալական այլ կատեգորիաներով կամ անձնական բնութագրով։

Նմանօրինակ նույնությունը մարգիմալիզացված է. երբ էթնոկիրը իրեն չի համապատասխանեցնում ո՛չ էթնիկական մեծամասնության, ո՛չ փոքրամասնության արժեքներին և հայտնվում է էթնոմշակույթային մարգիմալիզացվածության կարգավիճակում, որը հիշյալ իրադրության պայմաններում հնարավորություն է տալիս ապահովել անձի հարմարման լավագույն տարբերակը։ Այժմ մեծ նշանակություն է ձեռք բերում անձի

<sup>7</sup> Տե՛ս E. Erikson, Psychosocial Ydentity, N. Y., 1995, էջ 223:

<sup>8</sup> В. П. Левкович, Н. Г. Панкова. Проблемы формирования этнического самосознания у детей в работах зарубежных авторов. Москва, 1983, с. 124-125.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 72:

սոցիալ-հոգեբանական հարմարման խնդիրը հատկապես երկմշակութային միջավայրում, որի հետ կապված՝ տարբերակվում է հարմարման երկու տարբերակ: Առաջինը հոգեբանական է, որը ենթադրում է հոգեբանական դրական ապրումներով հագեցվածություն, բավարարվածություն, հոգեկան ներդաշնակություն և այլն: Երկրորդը սոցիալ-մշակութային՝ իբրև անհատի և միջավայրի կապի արտաքին հետևանքների ամբողջականություն (առօրյա սոցիալ-մշակութային խնդիրները լուծելու ընդունակությունը ընտանիքում, դպրոցում, աշխատավայրում և այլն):

Ընդ որում, հոգեբանական լավ հարմարումը կախված է հաճախ սոցիալական աջակցությունից, կենսապայմաններից և այլն, իսկ սոցիալ-մշակութային լավ հարմարումը՝ մշակույթի ճանաչումից, միջավայրում ներգրավվածությունից և այլն:

Իսկ ինչպե՞ս է ընթանում էթնիկական նույնացման զարգացումը:

Իր կազմավորման ընթացքում էթնիկականությունն անցնում է մի շարք փուլերով, որոնք հարաբերակցվում են երեխայի հոգեկան զարգացման աստիճանների հետ: Ժ. Պիաժեն (1896-1980) առաջիններից մեկն էր, որ առաջադրեց այն հիմնադրույթը, թե ինչպես է երեխայի մեջ զարգանում ազգային խմբին պատկանելու գիտակցումը: 1951 թվականին կատարված մի ուսումնասիրության մեջ նա վերլուծել է «հայրենիք» հասկացության և «այլ երկիր» ու «օտարերկրացի» հասկացությունների ձևավորումը՝ որպես մեկ գործընթացի երկու կողմեր: Էթնիկ նույնության զարգացումը Ժ. Պիաժեն դիտում է իբրև իմացական մոդելների ստեղծում, որոնք կապված են «հայրենիք» հասկացության հետ, իսկ էթնիկ զգացումն էրը էթնիկ երևույթների մասին գիտելիքի պատասխանն են: Էթնիկ նույնության ձևավորման մեջ Ժ. Պիաժեն առանձնացնում է երեք փուլ<sup>12</sup>:

1) 6-7 տարեկան երեխան ձեռք է բերում առաջին հատվածային և կանոնավոր գիտելիքները իր էթնիկ պատկանելիության վերաբերյալ: Այդ տարիքում նրա համար առավել կարևոր են ընտանիքը և անմիջական սոցիալական միջավայրը, այլ ոչ թե երկիրը կամ էթնիկ խումբը:

2) 8-9 տարեկանում երեխան իրեն արդեն հստակ նույնացնում է իր էթնիկ խմբի հետ, առաջադրում նույնացման հիմքերը՝ ծնողների ազդությունը, բնակության վայրը, մայրենի լեզուն: Ջարթնում են ազգային զգացումները:

3) Կրտսեր դեռահաս տարիքում (10-11 տարեկան) էթնիկ ինքնությունը ձևավորվում է ամբողջությամբ. որպես տարբեր ժողովուրդների առանձնահատկություններ երեխան նշում է պատմության եզակիությունը, ավանդական կենցաղային մշակույթի յուրօրինակությունը:

Ներկայումս ամբողջ աշխարհում մեծ քանակությամբ ուսումնասիրություններ են կատարվում, ճշտվում և կոնկրետացվում են էթնիկ նույնության զարգացման փուլերի տարիքային սահմանները: Էթնիկ խմբի հետ աճողը նույնության առաջին «փայլատակումները» հեղինակների մեծ մասը նկատում է 3-4-ամյա երեխաների մոտ: Բայց գրեթե բոլոր հոգեբանները համաձայն են Պիաժեի տեսակետի հետ այն հարցում, որ երեխան «ռեալիզացված» էթնիկ նույնացման հասնում է կրտսեր դեռահաս տարիքում, երբ մարդու համար առաջնային նշանակություն է ունենում ես-ի արտացոլումը:

Էթնիկ նույնության զարգացման հետագա փուլերում ձևավորվում է ինչպես էթնիկ իրազեկությունը, որն իր մեջ ներառում է սեփական և այլ խմբերի վերաբերյալ պատկերացումները, այնպես էլ էթնիկ նույնությունը: Էթնիկ իրազեկությունն աճում է փորձի, նոր տեղեկություններ ստանալու և իմացական ունակությունների զարգացման հետ մեկտեղ: Սկզբնապես այն հենվում է ակնառու ցուցանիշների՝ մաշկի գույնի, արտաքին տեսքի, լեզվի, նյութական մշակույթի տարրերի (սնունդ, հագուստ), սովորույթների վրա: Հետզհետե մեծանում են երեխայի էթնիկ հատկանիշները, ընկալելու, նկարագրելու, բացատրելու ունակությունները: Այդ համակարգի մեջ նա ներառում է նորահոր տարրեր՝ ընդհանուր նախահայրերը, ընդհանուր պատմական ճակատագիրը, կրոնը: Էթնիկ նույնության զարգացման վերաբերյալ Բելառուսում Օ. Լ. Ռոմանովայի կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախադպրոցականների կարծիքները

<sup>12</sup> Տե՛ս В. В. Климчук, Этносоциализация, Москва, 1991, էջ 63-66:

<sup>13</sup> Տե՛ս "Духовная культура и этническое самосознание наций", Москва, 1990, вып. 1, էջ 261:

էթնիկ խմբերի տարբերությունների վերաբերյալ բավական ամորֆ են. «Մարդիկ այն-տեղ ապրում են ոչ մեզ նման»<sup>14</sup>: Այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «քաղաքի բնակիչ», «հանրապետության քաղաքացի», «էթնիկ հանրության անդամ» և այլն, նրանց համար համարժեք են: Եվ միայն կրոստեր դպրոցական տարիքում է նկատվում էթնիկ գիտելիքի զգալի աճ՝ ոչ թե մեծերից ստացած տեղեկատվության պարզ կրկնություն, այլ այդ ամենի համակարգում: Իսկ դեռահասներն ավելի հստակ և կոնկրետ դիտողություններ են անում ժողովուրդների մշակույթների, պատմական ճակատագրերի, քաղաքական կառուցվածքի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերաբերյալ:

Խմբային տարբերությունների մասին էթնիկ իրազեկության աճը անխուսափելիորեն կապված է էթնիկ խմբերից մեկի անդամներին նմանվելու և մյուս խմբերից տարբերվելու ընկալման հետ. իրեն ճիշտ էթնիկ ինքնաճանաչում տալու ունակության հետ: Ռոմանովայի նույն ուսումնասիրության մեջ տեսնում ենք, որ 5-6-ամյա և ավելի բարձր տարիքի երեխաները ոչ միշտ են ճիշտ ասում իրենց ազգությունը, ծնողների ազգությունը, չեն կարողանում տրամաբանական կապ տեսնել այնպիսի փաստերի միջև, ինչպիսիք են, օրինակ, ծնողների ազգությունը, բնակության վայրը, հաղորդակցման լեզուն, սեփական ազգությունը: Եվ միայն դեռահասները, որոնք համակարգված պատկերացումներ ունեն էթնիկ երևույթների մասին, հստակ նույնացնում են իրենց էթնիկ հանրության հետ՝ էթնոտարբերիչ հատկանիշների զգալի քանակի հիման վրա<sup>15</sup>:

Էթնիկ նույնության զարգացման ընթացքում երեխան անցնում է մի շարք փուլեր՝ անորոշից մինչև իրականացած, որի հետևանքով դեռահասության շրջանում ձեռք է բերում էթնիկ հանրությանը պատկանելու հուզական գնահատման գիտակցություն:

Էթնիկ կարգավիճակն առավել հաճախ մնում է անփոփոխ ամբողջ կյանքի ընթացքում: Այնուամենայնիվ, էթնիկ նույնությունը փոփոխական, շարժուն կառույց է:

Առաջին՝ նրա կազմավորման ընթացքը չի ավարտվում դեռահասության տարիքում: Արտաքին պարագաները կարող են ցանկացած տարիքում մարդուն դրդել վերափոխապատկերել էթնիկ պատկանելիության դերն իր կյանքում, բերել էթնիկ նույնության ձևափոխման և այլն: Բացի այդ, էթնիկ նույնության ձևափոխման վրա ազդում են ոչ միայն անհատի կյանքի անթիվ պարագաները, այլև հասարակական կյանքի փոփոխություններով պայմանավորված գործոնները:

Երկրորդ՝ նույնիսկ երեխաների մոտ էթնիկ նույնության զարգացման փուլերի հաջորդականությունը և նրանց ժամանակային սահմանները համընդհանուր չեն բոլոր ժողովուրդների համար և սոցիալական բոլոր իրավիճակներում: Սոցիալական ենթատեքստից կախված՝ դրանք կարող են արագանալ կամ դանդաղել:

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը, կարող ենք նշել.

1. Էթնիկական նույնացմանը մասնակցող գործոնները, հոգեբանական, մշակութային և սոցիալական լինելով, սերտորեն փոխկապակցված են, խորապես ազդում են անձի էթնոքնորոշ սոցիալականացման ու էթնիկական «ես-պատկերի» ձևավորման վրա:

2. Անձի ազգային նույնացումը փոփոխում, շարժուն կառույց է, և ցանկացած տարիքում անձը կարող է վերափոխապատկերել իր ազգային պատկանելիությունը:

3. Անձի ազգային նույնության դսևորումները պայմանավորված են նրա էթնոդիքորոշումային համակարգով: Ըստ այդմ՝ խիստ կարևոր է տարբերակել էթնոմետ և էթնոմերժ դիքորոշումները, որոնցից առաջինը նպաստում է անձի ազգային նույնականացման գործընթացին, իսկ երկրորդն, ընդհակառակը, խաթարում է այն:

**Н. Р. АКОПЯН - К вопросу о национальной идентификации личности.** - В статье комментируются факторы национальной идентификации, говорится об этнодифференцирующих качествах разных национальностей, об этнических установках, о маргинализации личности, а также рассматриваются этапы развития этнической идентификации.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 42-43: